

1662 ԹՈՒԻՆ ՏՊԱԳՐՈՒԱԾ ՄԻ «ԱՅՐԲԵՆԱՐԱՆ»

Վերջին տարիներում, երբ նոր ու լայն ասպարէզ բացուեց Հայ հնատիպ գրքի ուսումնասիրութեան համար, մի շարք նոր գրքեր եւս երեւան եկան, որոնց գոյութիւնը մինչեւ այժմ անյայտ էր մտացել մեր բանասէրներին եւ «Հայ հնատիպ գրքի մատենադիտական ցուցակ»ը կազմողներին:

«Սիոն» յարգոյ խմբագրի գեղեցիկ մտածումն ունեցաւ կիւլպէնկեան Մատենադարանի հնատիպ գրքերի ցանկը, յիշատակարաններով հանդերձ, առաւ «Սիոն»-ի օգնութիւն, որ խիստ հետաքրքրական եւ օգտակար է: Երանի մեր միւս հայկական գրադարաններն էւս, գէթ պարզ ցանկը ներկայացնեն մեր մամուլով, ինչպէս որ այն համալսարանէ մեզ «Հասկ»ում տրուեց Մեծի Տանն կիլիկիոյ Կաթողիկոսութեան գրադարանէ մատենադարանի կողմից, մինչեւ որ Երեւանի Միասնիկեան Գրադարանի մատենադիտական բաժնի աշխատողները, հնարաւորութիւն ունենան տպագրութեան յանձնելու իրենց կողմէ «Հայ» հնատիպ գրքի մատենադիտական լրիւ ցուցակը:

Գէտք է խոստովանել, որ «Հայ հնատիպ գրքի մատենադիտական ցուցակ»-ի հրատարակումից, կամ առէին ձեռք՝ իմ ձեռքը «Հանելուց յետոյ», իմ մտաւեւեռումներից մէկը դարձաւ նաեւ հնատիպ գրքերի խնդիրը, իսկ այդ առիթը կազմուած մամանակաւոր ցուցակը՝ իմ «Աւետարան»ը:

Երբ ջանքերն ու աշխատանքները արդիւնաւորուեցին մի շարք նորայայտ «ճուրջակ» շեղած եւ երկաստղանիւղ շուրջ գրքերի յայտնաբերումով, որոնց մասին սիրտ խօսենք առանձին: Սոյն գրքերի շարքում, ինձ յաջողուեց ձեռք բերել նաեւ մի ձեռագիր գիրք, որն րնդորինկուած է 1662 թուի Ամսդերտամում Կարապետ Աղբիւնա-

ցու կողմից տպագրուած մի «Աղբիւնարան»-ից:

Ստորեւ նախ նկարագրենք ձեռագիրը¹, ապա յայտնենք մեր կարծիքը:

Ձեռագիրը մի փոքրիկ՝ 9.6×7.2 սմ. ծաւալով՝ գրքոյկ է, ունի 118 թերթ, որի սկիզբի 6 եւ վերջի 10 թերթերը մաղաղաթ են, իսկ մնացեալները՝ թուղթ:

Գրքոյկը բաղկացած է երկու մասից. ըսկորի 1-56 եւ 88-118-ը շարականներ եւ պատարագի մասեր են, իսկ մնացեալ միջին մասը՝ թ. 57-ա-88-ը, Աղբիւնարան:

Ձեռագրի սկիզբն ու վերջը թեք լինելով, պահապան է դրչի կամ այլ կարեւոր յիշատակարանի. բայց Աղբիւնարանի սկզբում կայ անտանաթերթ, այսինքն դրսի սկիզբը, սրին եւ վերաբերում է մեր խօսքը: Անտանաթերթն սկսուած է այսպէս (թ. 57ա).

«Տեառն, մոկանի հոնտորապետի եւ քարգմանչի սորին աշակերտէ յախմար Կապայտէ Աղրիւնացոյ. որպէս Յօսաննիսի քանանայի. սանմանցոյ գիրքս այս վ(ա)՝ ա(ն) վարժման մանկանց աղայոց եւ կուսից աղկանց. այլ եւ այլոց եւ կանանց առհաւսարակ, ընթերցման եւ սեւման. տխրալաց եւ հեռեւորաց. Դ գոր. տուինք ի ձեռն. ամենեւցաւ իրքեւ գրաւալի աստուածային յարկաց, հնոց եւ նորոց եւ կտակարանաց, գոր. ոք ծարաւին սուման, եւ յոյց սխտայմայ ի դէպ ժամու սուսցին:

Այլ տպեցաւ սա ի քուականին ար ի Ք(րիստոս)է ՌՈԿԲ (1662) եւ հայց ՌժԺԱ (1111) յամսոյն յուլեայ իր (22):

Ի հայր(ալպետու(թ)ե(ան) ս(ուր)բ ա-

¹ Ձեռագրի լրիւ նկարագրութիւնը տրուած է «Նոր Զուգայի ձեռագրաց ցուցակ»-ի Բ Հատորի մէջ:

քառայն էլմիածնի Տեառն Յակօբայ Զուգա-
յեցոյ ի քաղաքն Յամստէրտամ Գեր տպագ-
րատան Գոյն պարք էլմիածնի Կ. Ս(ՈՒՐ)Ք
Սարգսի. ոչ Վ(ա)Ս(ն) Վաճառման, այլ Ժրի
Եւ ի փառս Ք(րիստոս)ի տացի ում և կարիք
իցից»:

Ձեռագիրն այնուհետեւ խօսում է Հովի-
տիմեան կոյսերի ու տառերի գիւտի մասին
և տալիս այբուբենն ու Հեղարանը, Հայկա-
կան ու արարական թուանշանները, նախա-
հարց, նահապետաց, մարդարէից ևւ առա-
ջելոց անունները, մի շարք քառերի համա-
պատասխանք, քերականութիւն, շարա-
փան-էրզեր, Հաւատամքը, աղօթքներ,
«Վ(ա)Ս(ն) քերականական Հաւատաց որ ի
Դաղմատաց թարգմանեալ էր ի Հայրս ՌՈԳ
(1603) Թուին Ք(րիստոս)ի» (թ. 73ր-85ր)
և Վերջում (թ. 85ր-88ր) այբբենի վրայով
մի ուսանաւոր որ մեռած է Թերի, վերջանա-
լով Ս գրի վրայ:

Ռաւանուորն սկսւում է Հետեւեալ տա-
նով.

«Այքն Աստուծոյ է օրինակ,
Ուսուցանէ գեղգ համարմակ,
Մանուկ դու լիք մտօք յըստակ,
Նմոցեցից քոց յիշատակ:

Իհնն քաղում տայ քեզ խրատ...»:

Այս գրչագրից պարզուած է, որ մեռա-
ղիրն ընդօրինակուած է 1662 թուին Ամս-
դերատմում Կարապետ Աղբիանացու կող-
մից Հրատարակուած «Այբբենարանից»,
իսկ մնացեալ մասը, մեր կարծիքով, ար-
տագրուած է նոյն՝ 1662 թուին Ամսդերտա-
մում Հրատարակուած «Կարգաւորութիւն

Հասարակաց աղօթից» (Ժամագիրք) գրքից:
Որպէս Հիմնաւորում մեր առաջին կար-
թիքի², յաօթ Զեղքի տակ ունենք Օքսֆոր-
դի Համալսարանի Բողէան Գրադարանին
պատկանող տպագիր այդ գրքի համարն ու
անունը, որ բերում ենք ստորեւ.

«Karatet Andrianaci: Anoun groys ays
Kocceav Zir. (Girk Mankanc eo noravazic
haykazan seric) 72 pp. Amsterdam, 1662—8D,
375 BS [and another copy at Mar(shal) No.
411]»:

(Կարապետ Աղբիանացի: Անուն գրայն
այս կոչեցաւ Զիր. (Գիրք մանկանց և նորա-
վարժից Հայկադեան սեռից) 72 էջ, Ամս-
դերտամ, 1662—8D, 375 BS (և մի այլ օրի-
նակ Մարշալ թ. 411)»:

Այս գրադարանում է, որ 1968 թուին
յոյտնարբերուեց նոր Զուգայում 1638 թուին
Հրատարակուած առաջին գիրքը՝ «Աղագոս»
անունով:

Յոյս ունենք որ մի օր էլ Հնարաւոր կը
լինի գտնել «Կարգաւորութիւն աղօթից»ը և
համեմատել ու հաստատել ստուգութիւնը:

Լ. Գ. ԽԻՆԱՍԻԱՆ

Նոր Զուգա

2 Այս մասին իր ժամանակի³ 6 Յուլիս 1906 թ.
գրութեամբ, տեղեկացուած է «Հայ հմատիկ գրքի
մատենագիտական բաժնեյին»:

3 Այս գրքի մասին եղած տեղեկութիւններ ստա-
ցել ենք Առջ. գրադարանի Արեւիկեան Բաժնի վարիչ
Պրմ. Դէլչիզ Բարբեթից, որին ևւ յայտնուած ենք
մեր շնորհակալութիւնները: